Աուդիտի գործընթացը և սերտիֆիկատի տրամադրումը, կասեցումը, դադարեցումը կամ սերտիֆիկացման ոլորտի կրճատումը

«Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնում (այսուհետ՝ ԿՀՍՄ) ***սերտիֆիկացման գործընթացը*** կազմակերպվում և իրականացվում է համաձայն SOP-006-21-03 ներքին ընթացակարգի, որը ներառում է հետևյալ փուլերը՝

- Հայտի ներկայացում ԿՀՍՄ,
- Հայտի վերլուծություն, սերտիֆիկացման գործընթացի նախաձեռնման մասին որոշման ընդունում,
- Աուդիտի պլանի մշակում (այդ թվում աուդիտի նպատակի, չափանիշների, ինչպես նաև աուդիտորական խմբի և ժամանակացույցի կազմում և համաձայնեցում պատվիրատուի հետ),
- Աուդիտի 1-ին փուլի իրականացում,
- Աուդիտի 2-րդ փուլի իրականացում,
- Աուդիտի հաշվետվության կազմում,
- Համապատասխանության հսկողության աուդիտի պլանավորում և իրականացում,
- Համապատասխանության հսկողության աուդիտի հաշվետվության կազմում:

ԿՀՍՄ-ի կողմից տրված սերտիֆիկատի գործողությունը կասեցվում է հետևյալ դեպքերում՝

- երբ սերտիֆիկացված կազմակերպության կառավարման համակարգը դադարում է համապատասխանել սերտիֆիկացման պահանջներին՝ ներառյալ կառավարման համակարգի արդյունավետության պահանջները,
- երբ սերտիֆիկացված կազմակերպությունը խոչընդոտում է սահմանված հաճախականությամբ համապատասխանության հսկողության աուդիտների իրականացմանը,
- երբ սերտիֆիկացված կազմակերպությունն ինքն է դիմում սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու համար:

ԿՀՍՄ-ն ապահովում է, որ սերտիֆիկատի տրամադրման, մերժման, սերտիֆիկացման ոլորտի ընդլայնման կամ կրճատման, սերտիֆիկացման կասեցման կամ վերականգնման, սերտիֆիկացման դադարեցման կամ նորացման վերաբերյալ որոշումները կայացնեն այն անձինք կամ հանձնաժողովները, որոնք չեն մասնակցել աուդիտների գործընթացին:

ԿՀՍՄ-ն նախքան սերտիֆիկատի տրամադրման, սերտիֆիկացման ոլորտի ընդլայնման կամ կրճատման, սերտիֆիկացման նորացման, կասեցման կամ վերականգնման, կամ դադարեցման վերաբերյալ որոշումներ կայացնելը պետք է հավաստի, որ.

- աուդիտի խմբի ներկայացրած տեղեկատվությունը բավարար է սերտիֆիկացման պահանջների և տվյալ ոլորտի սերտիֆիկացման համար,
- յուրաքանչյուր զգալի անհամապատասխանության համար վերլուծվել, ընդունվել և համադրվել է ուղղումներն ու ուղղիչ գործողությունները:

Սույն տեղեկատվությունը հանդիսանում է «ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿ» ՍՊԸ մտավոր սեփականությունը և դրա կիրառումը կողմնակի կազմակերպությունների կողմից հնարավոր է միայն «ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿ» ՍՊԸ տնօրենի թույլտվությամբ: